

Դ.—Չ. դարերի գործեր են, առ առաւելն է. դարի առաջին քառորդի: Նման երեւոյթներ ասորական—կոպտական արուեստի մէջ նոյն դարերն էին մատնանշում: Տեսանք նաեւ, թէ է. դարում Հայաստանի մէջ, ազգային ճարտարապետութեան ամենաձաղկեալ վիճակում, հայ շէնքերի վերայ պատկերագրութիւնը տեղի է տալիս զարդագրութեան: Մատնանշեցինք նաեւ միակ բացառութիւնը Չուարթնոցի զարդագրութեան, բայց Չուարթնոցը ինքն էլ իրրեւ շէնք բացառիկ տեղ է բռնում հայ ճարտարապետութեան մէջ. ի նկատի չունինք, ի հարկէ յետագայ նմանութիւնները:

Չ. դարից արդէն երկու մտայնութիւն կայ Հայաստանում պատկերագրութեան մասին, թեր եւ դէմ: Վրդանէս քերթողը իւր «Յաղագս Պատկերամարտից» գրութեան մէջ տալիս է մեզ շատ թանկագին տեղեկութիւններ. կարելի է ասել, այդ գրութիւնը նոյնքան արժէքաւոր է քրիստոնէական արուեստի Չ. դարի մասին, որքան Նեղոս Սինէպուս նամակը Օլիմպիոպոլիսու պրէֆէկտին նախընթաց դարի:՝ Մենք այդ գրութիւնը եւ նորա վաւերականութեան խնդիրը, որ կասկածի է ենթարկուած Տաշեանի կողմից իւր Յուլյակի մէջ, քննութեան պիտի ենթարկենք այլ առթիւ, երբ հայ մանրանկարչութեան ծագման մասին խօսենք. առ այժմ յիշում ենք միայն, որքան մեզ պէտք է մեր կոթողների պատկերագրութեան շրջանը պարզելու համար:

Պատկերագրչութեան կամ պատկերաչարգութեան հակառակորդներն ասում են, թէ «ոչ է արժան նկարս եւ պատկերս յեկեղեցիս առնել եւ բերեն վկայութիւն ի հին կտակարանաց, զոր վասն կոպտաշտութեան հեթանոսացն էր ասացեալ»: Վրդանէս ցոյց է տալիս, որ հին կտակարանից բերուած վկայութիւնները հեթանոսութեան են վերաբերում եւ ոչ քրիստոնէական պատկերագրութեան, որ համապատասխան է հին եւ նոր կտակարանների բովանդակութեան: «Ի մեհանս կոպց է դրօշեալն Որմիզդ, Արամազդ, եւ պոսնկութիւնք իւր եւ կախարչութիւնք: Իսկ յեկեղեցիս Աստուծոյ տեսա-

նեմք նկարեալ զսուրբ կոյսն աստուածածին՝ ի գիրկս իւր ունելով զՔրիստոս իրրեւ յայնժամ, զարարիչն իւր եւ զորդի եւ զստեղծիչն ամենայնի»: Ապա հեթանոսական մեհանները պատկերագրութեան որպէս հակագրութիւն քրիստոնէական տնօրինականներն է թւում. «զճնանին ասեմ եւ զմկրտին, զչարշարանսն եւ զխաչելութիւն, զթաղումն եւ զյարութիւնն, զհամբարձումն յերկինս, եւ զայդ ամենայն նկարեն յեկեղեցիս»: Իրրեւ եղբակացութիւն յայտնում է, թէ «Ահա յայտ է, զի չէ արտաքոյ գրոց պաշտել զպատկերս»:՝ Այդ պաշտաման առարկաներն են նաեւ Պաշը եւ Աւետարանը, ինչպէս տեսանք (Ը. Գլ. եր. 98):

Վրդանէս քերթողից յետոյ Յոհան Մայրավանեցին է, է. դարի առաջին քառորդի անձնաւորութիւն, որ մաքառում է ծայրայեղ պատկերամարտերի դէմ եւ ապա Յոհան Օձնեցին (718—28) իւր Պաղտիկեանց դէմ գրած ճառի մէջ,** բայց առաւելագէս պաշտպանելով Փրկչի եւ Պաշի պաշտամունքըն ու պատկերագրութիւնը: Արարական տիրապետութիւնը միանգամայն աննպաստ էր պատկերագրութեան կամ պատկերաւոր քանդակների դէմ, մանաւանդ ժամանակի պատմիչը՝ մեզ յայտնում է. Ը. դարի առաջին քառորդին, թէ ինչպէս նոքա խորտակում էին «ղկենդանագրեալ պատկերս ճրճարիտ մարդեղութեան Տեսան մերոյ եւ Փրկչին եւ Նորին աշակերտացն» կամ «զնմանութիւն պայծառացեալ խաչին Քրիստոսի», որ յատկապէս եկեղեցուց դուրս եղած արձաններին կամ կոթողներին կարող է վերաբերուիլ: Մատենագրական այս տեղեկութիւններն էլ զեղարուեստական հոսանքի փոփոխութեան հետ պէտք է իրրեւ լուսարանութիւն ծառայեն մեր գերեզմանական կոթողների ժամանակի վերջին շրջանը որոշելու համար:

*Վրդանիսի Քերթողի Յաղագս Պատկերամարտից. հրատ. Եղիշէ Պատրիարք Դուրեանի. Սիոն. 1927. Երուսաղէմ. եր. 23 եւ 61:

**Կաղանկատուացի հրատ. Շահնագարեանցի, Փարիզ: Յովհաննու Իմաստասիրի մատենագրութիւնք. 1893:

†Ղեւոնդ. հրատ. Եգեանի. 1887. 100. 152:

*Strzygowski—Origin of Christian Church Art. p. 144: